Ընկերություն՝ AMX | Armenia Securities Exchange
Հաստիք՝ Ֆինանսների և ռազմավարության մասնագետ/ Finance and strategy specialist

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ

AMX ընկերությունը փնտրում է Ֆինանսների և ռազմավարության մասնագետ, ով պատասխանատու է լինելու Ընկերության ֆինանսական տվյալների հավաքագրման, վերահսկման, վերլուծությունների և կանխատեսումների իրականացման, ինպես նաև ռազմավարական և ընթացիկ ծրագրերի համակարգման և մոնիթորինգի համար:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Պատրաստել ամսական, եռամսյակային և տարեկան կառավարչական և այլ հաշվետվություններ, ինչպես նաև վերահսկող և այլ մարմիններին ներկայացվող հաշվետվություններ,
- Վերահսկել և վերլուծել Ընկերության ֆինանսական տվյալները՝ պարզելու Ընկերության ֆինանսական կարգավիճակը, և ապահովել ֆինանսական տեղեկատվության ամբողջականությունը,
- Իրականացնել եկամուտների, ծախսերի և այլ ֆինանսական վերլուծություններ և կանխատեսումներ. ներկայացնել հիմնավորված առաջարկներ,
- Մասնակցել Ընկերության տարեկան և եռամյա ծախսերի և եկամուտների բյուջեի և գործարար ծրագրի կազմմանը և կատարողականի վերահսկմանը,
- Իրականացնել բյուջեի կատրողականի ընթացիկ վերահսկում,
- Համակարգել Ընկերության ռամավարական ծրագրերի իրականացման գործընթացները և ընթացքը, կատարել պարբերական մոնիթորինգ և ներկայացնել համապատասխան հաշվետվություններ Ընկերության ղեկավարությանը:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ

- Մագիստրոսի աստիճան ֆինանսների կամ հարակից ոլորտներում,

- Առնվազն 2 տարվա նմանատիպ աշխատանքային փորձ, Ֆինանսական հաստատությունում աշխատանքային փորձը կդիտվի որպես առավելություն,
- Միջազգային մասնագիտական որակավորում կամ դրա ձերքբեռման ընթացքում գտնվելը (ACCA, CFA կամ համարժեք) կդիտվի որպես առավելություն,
- MS Excel- ի և հաշվապահական ծրագրերի առաջադեմ գիտելիքներ,
- Խորացված գիտելիքներ ֆինանսական վերլուծության, բյուջետավորման և կանխատեսման ոլորտում,
- Ճկուն և վերլուծական միտք,
- Թիմային աշխատանքի և ժամանակի արդյունավետ կառավարման հմտություններ,
- Արագ կողմնորոշվելու և խնդիրներին լուծում տալու ունակություն,
- Հայերենի, անգլերենի և ռուսերենի լավ իմացություն:

Աշխատավարձը՝ մրցակացային

Տրամադրվող արտոնություններ՝

- Բժշկական ապահովագրություն,
- Տարեկան բոնուս և աշխատավարձի վերանայում,
- Սպորտային փաթեթ,
- Ներքին և արտաքին դասընթացներ,
- Տարատեսակ զեղչեր,
- Հաճելի գրասենյակային միջավայր,
- Թիմբիլդինգային և կորպորատիվ միջոցառումներ,
- Անընդհատ զարգացող և մոտիվացնող թիմ,
- Թեյ, սուրճ, ժպիտներ ☺

Դիմելու կարգը՝ Բոլոր հետաքրքրված անձինք կարող են ուղարկել իրենց ռեզյումեն (CV) հետևյալ էլ. հասցեին՝ **careers@amx.am**, նամակի վերնագրի հատվածում նշելով «**Ֆինանսների և ռազմավարության մասնագետ**»:

Վերջնաժամկետ՝ «31» Հոկտեմբեր

Ընկերության մասին՝

Հայաստանի ֆոնդային բորսան գործող միակ ֆոնդային բորսան է, որի կազմում է նաև Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան: Միասին մենք արդեն 18 տարի աջակցում ենք ներդրողներին ներգրավել կապիտալ:

Մեր նպատակն է սատարել բարենպաստ գործարար միջավայրի ստեղծմանը և գրավել հայաստանյան ու միջազգային ներդրողների՝ առաջարկելով արդյունավետ լուծումներ ու ծառայություններ, այդ թվում՝ առևտրի, քլիրինգի, վերջնահաշվարկի և կենսաթոշակային համակարգի կառավարման ոլորտում:

Գտնվելու վայրը՝ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1, «Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 5-րդ հարկ,

Վեբ կայքեր՝ amx.am, cda.am,

Facebook https://www.facebook.com/AMXArmenia/,

Linkedin https://www.linkedin.com/company/amxarmeniaexchange/: